ԵԹՈՎՊԻԱՅԻ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Վեհափառ Հայրապետի հրավերով, հուլիսի 1-ին և 2-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Եթովպիայի քոյր եկեղեցու պատվիրակությունը, որի կազմում էին Գոնդարի Պետրոս արքեպիսկոպոսը, Ադուայի Ամենասուրբ Երրորդության վանքի վանահայր Մելաքե Բերհանատ Վոլդե Հավավիատ վարդապետը, Ադդիս-Աբեբայի Աստվածաբանական դպրոցի դիրեկտոր պր. Սամվել Տերրեֆեն և Ադդիս-Աբեբայի համալսարանի փիլիսոփայության և կրթության դասախոս դոկտ. Էզուալե Գաբրե-Իոհանին։

Պատվիրակության ուղեկցում էր Մոսկվայի և Համայն Ռուսաց Պատրիարքարանի ներկայացուցիչ Հայր Ֆիլարետը։

Երևանի օդանավակայանում պատվիրակության դիմավորեցին Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Տերյանը և Մայր Աթոռի դիվանապետ պր. Հայկ Առաքելյանը։

Հարգելի հյուրերը հետմիջօրեի ժամը 2-ին ժամանեցին Մայր Աթոռ և Մայր Տաճարի առաջ ջերմորեն դիմավորվեցին միաբանության և Հոգևոր Ճեմարանի ուսանողության կողմից և առաջնորդվեցին Մայր Տաճար՝ իրենց ուխտն ու աղոթքը կատարելու։

Այնուհետև պատվիրակությունը առաջնորդվեց Վեհարան։ Վեհափառ Հայրապետը անձամբ ողջունեց և ընդունեց հյուրերին և զրույց ունեցավ նրանց հետ։

Ապա հյուրերը ծանոթացան Մայր Աթոռի ներքին կյանքին, եղան Մայր Տաճարում, Ճեմարանում, գրադարանում, դիտեցին եկեղեցական իրերի արվեստի նմուշները, ինչպես նաև եղան Էջմիածնի բոլոր պատմական սրբավայրերում։

Հուլիսի 2-ին, կիրակի, Մայր Տաճարում հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց Վրաստանի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը։ Սուրբ պատարագին ներկա էին Վեհափառ Հայրապետը, ինչպես նաև Եթովպական քույր եկեղեցու պատվիրակության անդամները, Գերագույն Հոգևոր Խորհրդի և Վերստուգիչ հանձնաժողովի անդամները, ուխտավորներ ԱՄՆ-ից, որոնց թվում Օհայո նահանգի Միչիգանի համալսարանի անգլերեն լեզվի և գրականության դասախոս պրոֆ. Էմմանուել Վարանդյանը և տիկին Բեկյանը։

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետի առաջնորդությամբ, հյուրերը բարձրացան Վեհարան, ուր տեղի ունեցավ ջերմ զրույց Վեհափառ Հայրապետի և նրանց միջև։

Ժամը 3-ին Վեհարանի սեղանատանը կազմակերպվեց ընդունելություն Եթովպական եկեղեցու պատվիրակության պատվին։ Սեղանը օրհնեց Վեհափառ Հայրապետը և առաջին բաժակը առաջարկեց Եթովպիայի Պատրիարք Նորին Սրբություն Աբունա Բասիլիոսի և Եթովպիայի եկեղեցու պատվիրակության կենացը։ Երկրորդ բաժակը Վեհափառ Հայրապետը առաջարկեց Ռուս Պրավոսլավ եկեղեցու Մոսկվայի և Համայն

Ռուսիո Պատրիարք Ալեքսիի կենացը։ Գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսը բաժակ բարձրացրեց Վեհափառ Հայրապետի կենացը։ Գերապատիվ Տ. Պետրոս արքեպիսկոպոսը խոսեց Հայ և Եթովպական քույր Եկեղեցիների անցյալում և ներկայիս սրտագին փոխհարաբերությունների և Եթովպիայի հայ գաղութի բերած օգտակար նպաստի մասին Եթովպիայի զարգացման բնագավառում։

Հանուն Գերագույն Հոգևոր Խորհրդի, հյուրերին ողջունեց նաև դոցենտ Ա. Տիրացյանը։

Խոսք առավ նաև տիկին Բեկյանը, որ հուշեր պատմեց 1915 թվականի մեծ եղեռնից, այն կապելով այսօրվա Մայր Հայրենիքի վերելքին և Ս. Էջմիածնի անսասանության։

Խորունկ հետաքրքրությամբ լսվեց պրոֆ. Էմմանուել Վարանդյանի հայրենաշունչ խոսքը Ս. Էջմիածնի և Մայր Հայրենիքի աննախընթաց ծաղկման և հայ ժողովրդի պայծառ ապագայի մասին։

Վեհափառ Հայրապետի հրավերով, սեղանը օրհնեց գերապատիվ Տ. Պետրոս արքեպիսկոպոսը։

Այնուհետև Վեհարանում շարունակվեց ղրույցը։

Այցելության վերջում և հրաժեշտի պահին, Վեհափառ Հայրապետը արծաթյա քանդակազարդ հուշանվեր պնակներ նվիրեց Եթովպացի երկու հոգևորականներին և Երևանի ալբոմներ՝ պատվիրակության աշխարհիկ անդամներին։

Եթովպացի մեր թանկագին հյուրերը, և՛ շաբաթ և՛ կիրակի օր, իրենց ազատ ժամերին ծանոթացան նաև Երևանի տեսարժան վայրերին։

Եթովպական քույր Եկեղեցու պատվիրակությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածնից մեկնեց հուլիսի 3-ին, երկուշաբթի առավոտ։